ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

« 09 » 10 2018 թ.
№ ՊՆ/3882

պարոն Տ. Հարությունյանին
ՀՀ ք. Երևան, Աճառյան 33/4,
էլ. հասցեն՝ tamarapetrosyan@eldorado.am
ՀՎՀՀ՝ 00112776

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/3-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր 2018թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 100 հատ 11ՖԳ-400 տեսակի սնուցման մարտկոցներ մասով՝ 8799996 (ութ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն ընկերության կողմից վերը նշված ապրանքներ 20.09.2018թ. դրությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. սեպտեմբերի 20-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 100 հատ 11ՖԳ-400 տեսակի սնուցման մարտկոցներ մասով՝ 8799996 (ութ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Տեղեկացնում եմ, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 360800 (երեք հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ

(պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 240916 (երկու հարյուր քառասուն հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Կոմարկետ» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք) 880000 (ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ 900005000758 հաշվեհամարին:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ